Ամփոփ նյութ

«ԱՎՏՈ ՊԼԱԶԱ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 817) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ **«ԱՎՏՈ ՊԼԱԶԱ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 817)** փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:
Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

Որոշում N 1/2Ա
07/01/2022

«ԱՎՏՈ ՊԼԱԶԱ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 817) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումը թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել **թիվ 817 լիցենզիայի գործունեության կասեցում՝ մեկ տարի ժամկետով:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ ***Ներսես Երիցյան***